ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1569-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2024 թվականի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

6-Ի N 1569-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքում բազային և թեմատիկ տարածական տվյալների ցանկը և դրանց ստանդարտացման ուղեցույցները հաստատելու մասին» N 1569-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) N 3 հավելվածը լրացնել 68.1 կետով.

«68.1. **Խաղողի տնկարկ** – նույն հողամասում գտնվող խաղողի վազերի շարունակական և ամփոփ առկայություն, որը սահմանազատվում է հարևան տարածքներից՝ հաշվի առնելով արտադրության մասնագիտացումը, այգու տնկման տարեթիվը, ոռոգման տեսակը, սորտային կազմը և այլ բնութագրիչներ, այդ թվում՝ խաղողի գինեմետ և/կամ սեղանի և/կամ համապիտանի սորտերով տնկված այգի: Այս տարածական շերտը ներկայացվում է պոլիգոնային տեսքով՝ հետևյալ հիմնական հատկանիշներով (աղ. 2.1):

1. Արտաքին նույնականացուցիչ (Id).

2. Սկզբի ամսաթիվ (Start_Date).

3. Օգտագործումը (Utilization) - ներկայացվում է խաղողի կիրառման

նպատակը՝ 1. գինեմետ, 2. սեղանի, 3. համապիտանի.
4. Տնկման տարեթիվ (Planting_Year) - ներկայացվում է տնկարկի տնկման տարեթիվը.
5. Տնկարկի փաստացի մակերես (Area)- ներկայացվում է տնկարկի պոլիգոնի փաստացի մակերեսը (չափման միավոր՝ հա).
6. Սորտ (Variety) - ներկայացվում է տնկարկում մշակվող սորտը/սորտերը.
7. Արմատակալ (Rootstock) - ներկայացվում է ֆիլոքսերադիմացկուն արմատակալով պատվաստված վազերի առկայությունը՝ 0-ոչ, 1-այո.
8. Ոռոգում (Irrigation) - ներկայացվում է ոռոգման մասին տեղեկատվություն՝ 1. ոռոգվող, 2. անջրդի.
9. Ոռոգման տեսակ (Irrigation_Type) - ներկայացվում է ոռոգման ձևի մասին տեղեկատվություն՝ 1. ավանդական (առվային եղանակ), 2. խորքային հորերով, 3. կաթիլային.
10. Փաստացի ստացված բերքի քանակը (Yield) - ներկայացվում է տնկարկի տվյալ տարվա բերքատվությունը (չափման միավոր՝ g/հա).
11. Ապահովագրություն (Insurance) - ներկայացվում է գյուղատնտեսական ապահովագրության առկայությունը՝ 0-ոչ, 1-այո.
12. Վերջին ամսաթիվ (End_Year) - ներկայացվում է տվյալների բազայում խաղողի տնկարկի վերաբերյալ տվյալի հեռացման կամ փոփոխման ամսաթիվը:

Աղյուսակ 2.1 Խաղողի տնկարկ շերտի հատկանիշներ

Դաշտի անվանում (Field name)	**Տվյալի տեսակ (Data**
Արտաքին նույնականացուցիչ (Id)	Integer (10)
Սկզբի ամսաթիվ (Start_Year)	Integer (10)
Օգտագործումը (Utilization)	Integer (10)
Տնկման տարեթիվ (Planting_Year)	Integer (10)
Տնկարկի փաստացի մակերես (Area)	Double (10)
Սորտ (Variety)	VarChar (30)
Արմատակալ (Rootstock)	Integer (10)
Ոռոգում (Irrigation)	Integer (10)
Ոռոգման տեսակ (Irrigation_Type)	Integer (10)
Փաստացի ստացված բերքի քանակը (Yield)	Double (10)
Ապահովագրություն (Insurance)	Integer (10)
Վերջին ամսաթիվ (End_Year)	Integer (10)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության

Վարչապետ՝ Նիկոլ Փաշինյան